ԿԱՐԾԻՔ

Հայկ Աշոտի Սմբատյանի՝ «Սոցիալական մոբիլիզացումը Ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում. խմբային և կառուցվածքային գործոնների սոցիոլոգիական հայեցակարգում» ատենախոսության վերաբերյալ ԻԲ 00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության արդիականությունը

Ատենախոսական հիմնախնդիրը խիստ արդիական է, իսկ հետազոտությունը, հենվելով սոցիոլոգիական տեսամեթոդաբանական հիմքերի և հարցադրումների վրա, իր արդյունքներով և արժեքով միջառարկայական: Ղարաբաղյան հակամարտության փուլայնության պայմաններում հայ բնակչության սոցիալական/քաղաքացիական մոբիլիզացման մեխանիզմների դուրսբերումը թույլ է տալիս խորքային կերպով ներթափանցելու հակամարտության ծագման և հանրային ընկալումների մեխանիզմների դաշտ, հասկանալու և ցուցադրելու հակամարտության մարդկային կողմը, ավելի լավ ճանաչելու կոնֆլիկտի պայմաններում ապրող հասարակություններին:

Աշխատանքի կառուցվածքը և մեթոդաբանական հիմքը

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, բաղկացած է ներածությունից, չորս գլխից, տասը ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Գրականության և աղբյուրների ցանկը լայն է և ընդգրկում է ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից արտասահմանյան և հայաստանյան հետազոտություններ, ինչը վկայում է հեղինակի խորացված, բազմակողմանի ոլորտային գիտելիքների մասին: Հատկապես կարևորում ենք հեղինակի կողմից կոնֆլիկտի սոցիոլոգիայի վերաբերյալ հայաստանյան գիտական մտքի, հեղինակների (Լ. Հարությունյան, Ս. Աստվածատուրով, Ա. Բաբլոյան և այլք) աշխատությունների, փորձի ուսումնասիրումն ու Ղարաբաղյան հակամարտության ընթացքին զուգահեռ հայ կոնֆլիկտաբանական մտկի էվոլյուցիայի ներկայացումը: Սա առանձին տեսական-հետազոտական խնդիր է, որի լուծումը կարող է հեղինակի համար հեռանկարային դառնալ:

Հետազոտությունն իրականացվել է մեկնաբանողական սոցիոլոգիական հարացույցի շրջանակներում՝ կենտրոնանալով ոչ թե պատճառահետևանքային կապերի բացահայտման, այլ սոցիալական փաստերի իմաստավորման և մեկնաբանման գործընթացների վրա: Ընդհանուր առմամբ իրականացվել է 19 խորին և 11 նարատիվ հարցազրույց՝ ընդգրկելով տարբեր ենթախմբեր՝ ըստ տարիքային միջակայքերի և նախկին փորձառությունների: Բացի այդ, փաստաթղթերի ուսումնասիրության մեթոդով հավաքագրվել և վերլուծվել է 120 երկրորդային աղբյուր՝ ներառյալ պատմագրական գրառումներ, հասարակագիտական

ուսումնասիրություններ, զեկույցներ, մենագրություններ, հոդվածներ, արխիվային նյութեր, հաղորդումներ, հարցազրույցներ և բաց տվյալադարաններ:

Աշխատանքի ուժեղ կողմերը

Հատկանշական է այն, թե ինչպես է հեղինակը համադրում կոնֆլիկտաբանական և սոցիոլոգիական տեսությունները՝ նպաստելով կոնֆլիկտի սոցիոլոգիայի սահմանների ընդլայնմանն ու ժամանակակից կոնֆլիկտային իրադարձությունների ներառմանը հետազոտական մեթոդաբանության ավանդական/արդիականացված շրջանակներում: Գտնում ենք, որ կոնֆլիկտի սոցիոլոգիայի վերաբերյալ ատենախոսության տեսական մասը կարող է հետագայում վերամշակվել և առանձին հրատարակվել՝ որպես ուսումնական ձեռնարկ:

Ատենախոսության կարևոր արդյունքներից է, անշուշտ, կոնֆլիկտի վերլուծության մեխանիզմահեն մոտեցման հիմնավորումն ու փորձարկումը Ղարաբաղյան կոնֆլիկտի օրինակով, որի դեպքում, հեղինակի խոսքերով, «ձևակերպվում է միջին մակարդակի տեսական մոդել, որը ներուժ ունի հարստացնելու գիտական դիտանկյունները այն հարցի շուրջ, թե ինչպես կարող է ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտը վերածվել հասարակության կառուցվածքային միջավայրի, իսկ ներքևից վերև ծագած և ձևավորված սոցիալական մոբիլիզացումը՝ նորմատիվներով հագեցած սոցիալական կանոնի»: Պետք է նշել, որ մեխանիզմահեն մոտեցումն ակտիվորեն դասավանդվել և իր աշխատանքներում կիրառվել է Հայաստանում կոնֆլիկտի սոցիոլոգիայի հայտնի ներկայացուցիչներից մեկի՝ Ս.Վ. Աստվածատուրովի կողմից, իսկ չլուծված կոնֆլիկտի վերածումը հասարակության կառուցվածքային միջավայրի հայեցակարգվել է, մասնավորապես, պրոֆ. Լ. Հ. Հարությունյանի և Ա.Ե. Մկրտիչյանի կողմից՝ «ոչ խաղաղության, ոչ պատերազմի» հասարակության մոդելի շրջանակներում: Հեղինակը նպաստում է այդ հայեցակարգման ավանդույթի շարունակությանն ու ընդլայնմանը:

Աշխատանքի արժեքավոր արդյունքներից է, որ վերլուծվել և դասակարգվել են քաղաքացիական մասնակցությանը նպաստող սոցիալական մոբիլիզացման արժեքային և ռացիոնալ դրդապատճառները, ցույց է տրվել միջէթնիկ հորիզոնական անհավասարությունների և մոբիլիզացման միջև առկա հաջորդական կապը՝ անհավասարությունից և հարաբերական զրկումից մինչև կոլեկտիվ դժգոհություն, մոբիլիզացման միացում և դրա կայացում:

Դիտողություններ և հարցադրումներ

Բացի դրական կողմերից, ատենախոսության տեսական և հետազոտական մասերի վերաբերյալ առկա են որոշ դիտողություններ, որոնք կրում են կառուցողական բնույթ և ավելի շատ խորհուրդներ են՝ գիտական հետազոտությունների որակի բարձրացման ուղղությամբ:

1. Տպավորություն ստեղծվեց, որ ատենախոսը խուսափում է աշխատանքում Արցախ, Արցախյան պատերազմ, Արցախի բնակչություն և այլ հարակից եզրույթների օգտագործումից: Միայն իր առաջին՝ ԵՊՀ ՈՒԳԸ ժողովածում 2018թ-ին հրատարակված հոդվածում օգտագործում է "Արցախյան կամավորական շարժում" եզրույթը: Աշխատանքում հիմնական հասկացություններից է ԼՂ՝ Լեռնային Ղարաբաղը: Համամիտ ենք Ղարաբաղյան հակամարտություն եզրույթի օգտագործման հետ, որն այս հակամարտության պաշտոնական անվանումն է: Միևնույն ժամանակ, Արցախ անվանումը պատմական է, և արտացոլում է հայկական կողմի հենց նառատիվային մոտեցումը, որը հեղինակի ուսումնասիրության թիրախն է:
2. Աշխատանքում լայնորեն օգտագործվում է "ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտներ" եզրույթը, որն արևմտյան կոնֆլիկտաբանական լեզվամտածողության դրսևորում է, մինչդեռ՝ հայաստանյան կոնֆլիկտաբանական մտքում այդ եզրույթը սակավ օգտագործվողներից է և լրացուցիչ "թարգմանության"՝ տեղայնացման կարիքն ունի: Բացի այդ, աշխատանքում "հարաբերական զրկանք" եզրույթի փոխարեն կօգտագործեի "հարաբերական զրկումը":
3. Ղարաբաղյան հակամարտության տարեգրության ներկայացման ընթացքում՝ մինչև 1991թ. Ղարաբաղյան առաջին պատերազմի սկիզբ, նշվում են Սումգայիթում հայկական ջարդերը, բայց չգտա Բաքվի հայտնի ջարդերի հիշատակումներ /էջ 60-61, աղյուսակ 2/:
4. Ադրբեջանական մոտեցումները նախապատերազմական փուլում ներկայացնելիս՝ ցանկալի էր բերել համապատասխան պաշտոնական հենքեր: Օրինակ՝ նշվում է, որ մինչև Ղարաբաղյան շարժումը Ադրբեջանի իշխանությունները երաշխավորել էին հայկական բնակչության՝ հայերեն լեզվի և մշակույթի պահպանման, զարգացման, կիրառման իրավունքը /էջ 62/: Որքանո՞վ էին այդ հավաստիացումները պաշտոնապես ամրագրված, թե՞ քաղաքական մանիպուլյացիաներ էին, որոնք նույնպես ստեղծել էին հակադարձ ընկալումներ և գործողություններ:
5. Ղարաբաղյան հակամարտության ընթացքում սոցիալական մոբիլիզացման և քաղաքացիական մասնակցության ուսումնասիրության խնդիրները, մեր կարծիքով, ենթադրում են այդ գործընթացների ներքին կառուցվածքի դուրսբերումն ու նկարագրումը, մասնավորապես՝ առաջնորդության ծագումը, բնութագրիչները, գործառույթների փոխակերպումը: Այլ խոսքերով՝ ովքեր էին առաջնորդում սոցիալական մոբիլիզացումը, ինչու, և ինչպես:
6. Ղարաբաղյան առաջին պատերազմին նախորդող ժամանակահատվածի վերլուծության ընթացքում հեղինակը խոսում է հայերի մոտ կոնֆլիկտային ընկալումների ձևավորման և սրման մասին, որոնք, կոնֆլիկտաբանության տեսության համաձայն, կոնֆլիկտային գործողությունների և՛ պատճառն են, և՛

հետևանքը: Հեղինակը նշում է, որ "էթնոդեմոգրաֆիական նվազումները հարուցել էին "բնակչության նվազման" և "էթնոմշակութային ոչնչացման" վախեր, որոնք ընկալվում էին իրական վրանգ և ուժեղացնում հավաքական անհանգստությունը" (էջ 70): Իսկ իրական չէի՞ն: Իհարկե, հեղինակի կողմից կիրառվող մեթոդաբանությունը նպատակ չի դնում դուրս բերելու կոնֆլիկտի պատճառահետևանքային կապեր: Մնալով մեթոդաբանական դաշտում՝ հնարավոր է, որ հեղինակն այնուամենայնիվ եկել է հետևյալ հարցին. ո՞րն է իրական սպառնալիքների այն բավարար չափը /ելնելով իրականացված հետազոտությունից/, որի դեպքում կարող ենք խոսել նշվող վախերի և մոբիլիզացման հիմնավորվածության և, համապատասխանաբար, օբյեկտիվության, անհրաժեշտության, անխուսափելիության մասին:

7. Եթե հայկական կողմի քաղաքացիական մոբիլիզացման մեխանիզմներն ատենախոսության մեջ դետալացված ներկայացվում են, ապա ադրբեջանական հասարակության քաղաքացիական մոբիլիզացման ներքին մեխանիզմներն աշխատանքում չեն քննարկվում: Որո՞նք էին ադրբեջանական հասարակության մոբիլիզացման գործոնները Ղարաբաղյան կոնֆլիկտում՝ համեմատած հայկական կողմի հետ:
8. Քաղաքացիական մոբիլիզացումը կոնֆլիկտում քննարկվում է՝ որպես հորիզոնական անհավասարությունից (անկախ փոփոխական) բխող երևույթ. իսկ ուղղահայաց անհավասարությունը չի՞ դիտարկվել (պաշտոնյաների ճնշումներ բնակիչների հանդեպ՝ ելնելով էթնիկ սկզբունքից): Նման դրվագներ հարցազրույցների մեջբերումներում առկա են:
9. Չնայած, ինչպես նշում է հեղինակը, իր հետազոտությունը սահմանափակված է 2022թ-ով և չի ընդգրկում հետագա ընթացքը, քննարկման շրջանակում կուզեինք խնդրել հեղինակին գնահատել մոբիլիզացիոն ներուժը ներկայիս հայաստանյան հասարակության այն սեգմենտների մոտ, ովքեր կրում են Ղարաբաղյան հակամարտության համապատասխան փուլերի ազդեցությունը, մոբիլիզացիոն փորձի մասին հիշողությունը, և հիմնախնդրի չլուծվածության բեռը:

Եզրակացություն

Չնայած նշված դիտարկումներին՝ ատենախոսությունը ներկայացնում է ինքնուրույն գիտական աշխատանք, որտեղ բարձրացված են արդիական հիմնախնդիրներ, կիրառված են արդիական տեսամեթոդաբանական մոտեցումներ և ստացված են գիտական՝ տեսական և կիրառական արդյունքներ: Հեղինակի կողմից հրապարակված գիտական աշխատանքները համահունչ են ատենախոսության բովանդակությանը և արտացոլում են հետազոտության հիմնական արդյունքները:

Այսպիսով, Հ. Ա. Սմբատյանի՝ «Սոցիալական մոբիլիզացումը Ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում. խմբային և կառուցվածքային գործոնների սոցիոլոգիական հայեցակարգում» ատենախոսությունը համապատասխանում է առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակը՝ ԻԲ 00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Արթուր Վլադիմիրի Աթանեսյան
քաղաքական գիտությունների դոկտոր, ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

26.01.2026 թ.
Քաղաքական գիտությունների դոկտոր Ա. Վ. Աթանեսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Մերի Վազգենի Հովհաննիսյան
Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ